ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 379-Ա
« 18 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ.
ՌՈՄԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ և 163-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի «1. Վարչատնտեսական մասի համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության» մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով Ռոման Առաքելյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2026 թվականի հունվարի 5-ից մինչև 8-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Ռոման Առաքելյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 3 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ռոման Առաքելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրեն Անուշ Թարվերդյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2026 թվականի հունվարի 9-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

ք. Եղեգնաձոր